

նայ արհի եպիսկոպոսի եւ թագէտոսի երիցու երեւանեցւոյ... »:

Հաղիւ թէ Ռսկան աչքերը կը փակէ՝ իրաց վեճակը կը փոխուի: Ռսկանայ մահուանէն ետքը՝ Սողոմոն՝ քեռորդին Ռսկանայ՝ գործակցութեամբ Մկրտիչ Ա.ի Զուղայեցւոյ կը հրատարակէ Մաշտոցի Բ. տպագրութիւնն ի Մարտէլլ՝ 1676ին, որուն Յառաջարանին մէջ առաջին անգամ կը գրուի աննպաստ թագէտի, այսպէս «... Աղանա- միտ վարդապետին (Ռսկանայ) միաբանեալ էր ընդ կայենածին եւ օձաբարոյ արիոսադաւան՝ չերի- ցւոյն թագէտի երեւանեցւոյ առ ի տպումն Ատե- նի սաղմոսին, յորմէ պատճառէ կրեալ զզանազան փորձութիւնս եւ զնորատես հարուածս... մահուամբ բարձաւ ի կենաց աստի. զորոյ զլիալիր պատմութիւն անցից նորին ամենայնի ընթեռնուող էք ի յատուկ գիրս նորին. եւ այսու ամենայնիւ զկնի մահուան տեառն իմոյ մատենեցայ ես տրուպս փոխանակ նորին ի ձեռն անօրէն գողոսին ամս չորս՝... գործելով միշտ (թագէտի) ընդդէմ ազգին շայոց եւ սրբոյ աթոռոյն էջմիածնի եւ գործարանի նորին, ոչինչ համարելով զամենայն շայս եւ զյոլով բանադրանս կաթողիկոսին եւ ամենայն վարդապետաց... »: Նոյն տարին այդ «լիակատար պատմութիւն» կոչուածն «ի յատուկ գիրս նորին» ի լոյս կ'ընծայուի: 1676ին Գրիգորի Կարեւոր հռչակագրութեան կոչուած գիրքն երկրորդ անգամ կը տպագրուի, որուն վերջը կը յարուի Ռսկանայ հռչակագրութեան: Այս կտակին մէջ՝ որ կարծես թագէտի երիցուն դէմ շինուած ամբաստանութեան գիր մըն է լոկ, ոչ իբրեւ «լիակատար» պատմութիւն, այլ առանց թուականի եւ առանց մասնաւոր դէպքի մը որոշ յիշատակութեան, թագէտի երիցու՝ Ռսկանայ տուած նեղութիւնքն յառաջ կը բերուին այսպէս. «... Թագանկերպ եւ զանազան փորձութիւնս հասոյց ինձ եւ իմոցն...: Ծառայ գոլով՝ անխնայաբար զգետնեալ փշրեաց զոսկերս իմ, հատուցումն գթութեանց իմոց. փրկեցեալն ինեւ ի բանտից եւ ի կապանաց՝ կապեաց եւ կնքեաց զգործարանս սրբոյ էջմիածնի, եւ զտունս իմ... հաստեցեալն յինէն ըստ հոգւոյ քահանայական կարգաւն, եւ ըստ մարմնոյ գոյիւքն եւ արդեամբք... կողոպտեաց զիս... »: Այս կտակին մէջ թագէտու երէց կ'անուանուի միշտ՝ «որդին կորստեան

եւ ժառանգն բէեզղերուղեան չէրէցն... սերմն ժանտ եւ ծնունդն անիծից... լրբադէմ... »:

Այնուհետեւ պատմութիւնը կը գտնէ զթագէտու ի վենետիկ, ուր 1686ին կը սկսի ճաշոյն ընտիր տպագրութիւնն: ճաշոյն հրատարակմանէն ետեւ թագէտու անհետ կ'ըլլայ պատմութեան մէջէն: —

Թագէտի երիցու վրայ այսչափ ինչ — լանու չարն — կ'աւանդեն մեզ արդի պատմագիրք հայ տպագրութեան, քաղելով ի յիշատակարանաց ժամանակակից գրոց:

Մեր թերակատար ծանօթութիւններն թագէտի երիցու վարուց վրայ՝ կ'ուղղէ եւ կ'ընդարձակէ, Ռսկանայ Աստուածաշնչին տպագրութեան պարագաները կը լուսաւորէ, եւ այլ ծանրակշիռ հետեւութեանց դուռ կը բանայ նոր հետաքրքրական ձեռագիր մը՝ զոր ահա կը հրատարակենք: —

Վանացս մատենագարանին հայ ձեռագրաց կարգին մէջ կը պահուի չորս թղթէ բազկացեալ մաքուր շղագիր ձեռագիր մը: Ձեռագրոյն հեղինակն է ինքն թագէտու երէց Համադասպեան, որ Ռսկանայ Աստուածաշունչ գրոց պատճառաւ 1669ին Մայիսի 26ին բանտ մատնուած ըլլալով չարութեամբ ոմանց, ինչպէս կը պատմէ ինքնին, բանտին մէջ տաղաչափօրէն կը պատմէ իւր կրած տառապանքները, եւ իւր թշնամեացը կենսագրութիւնը կ'ընէ: Թագէտու երէց իւր այս պատմական յիշատակարանը շարադրած է 1671ին. իսկ մեր այս օրինակը բնարէն ընդօրինակուած է 1774ին Պ. Ա. Մ. անուն բանասիրէ մը՝ ինչպէս ետքէն պիտի տեսնենք:

Որչափ մեր հետազոտութիւններն զմեզ կ'ապահովեն կարծենք թագէտի երիցու այս գործն ցայսօր անծանօթ է մնացած բանասիրաց: Եւ սակայն այս պատմական յիշատակարանն մեծ լոյս կը սփռէ հայ տպագրութեան պատմութեան վրայ, զոր մենք դիտել պիտի տանք Հաշոյնի յաջորդ թուոյն մէջ՝ ձեռագրոյն աւարտմանէն ետեւ: Հոս այսչափ միայն կ'ըսենք՝ թէ այս ձեռագիրն գլխաւորաբար պատմական մեծ նշանակութեան հետ, նաեւ թագէտի երիցու մէկ ընտիր գործն ալ կը ծանօթացընէ մեզի, որ եւ ոճոյ բնականութեամբն ու պարզութեամբն նաեւ մեր գեղեցկի ճաշակը կը հաճէ:

Նախ դնենք ձեռագիրն ամբողջ առանց դոյզն իսկ փոփոխութեան, ինչ ինչ ծանօթութիւններ աւելցընելով՝ վասն լուսաւորութեան:

¹ Անուշա կ'ուզէ Սողոմոն բռնէ՝ թէ թագէտու կաթողիկեայ էր, ինչպէս հրատարակելի ձեռագրոյս մէջ պիտի տեսնուի:

² Ինչպէս կարելի է, երբ Ռսկան 1674ին կը վախճանի, իսկ այս Մաշտոցն 1676ին կը տպուի: Թերեւս ուղղելի՝ «... արս... չորս... »:

³ Այս կտակն համառօտելով յառաջ կը բերուի ի Պատմ. Հայ Դպրատան, Բ. էջ 310: